ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/19

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի կողմից 11.07.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/19 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Բևեռային ուղի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 11.07.2017թ. բողոքով հայտնել է, որ ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն 26.06.2017թ. ծանուցվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի

«policevp-gnumner@rambler.ru» պաշտոնական էլեկտրոնային փոստին «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԾՁԲ-17/9/ԱԲ/1/ԿԾ» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ծանուցման ստացման հաջորդ օրը՝ 27.06.2017թ., ժամը 15:20-ին «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն սահմանված կարգի և հրավերի համաձայն՝ ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի «policevp-gnumner@rambler.ru» պաշտոնական էլեկտրոնային փոստին Ընկերության «beverayin.ughi@yahoo.com» էլեկտրոնային փոստից ուղարկել է պահանջված բոլոր փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.07.2017թ. պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն, որը էլեկտրոնային փոստով համակարգից ավտոմատ ծանուցմամբ ուղարվել է Ընկերությանը 08.07.2017թ., «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի հայտը համարվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող՝ սահմանված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

«Բևեռային ուղի» ՍՊԸ-ն պատշաճ և ժամանակին իրականացրել է Կարգով և հրավերով սահմանված բոլոր պահանջվող գործողությունները, ներկայացրել է համապատասխան փաստաթղթերը և հանդիսանում է բարեխիղճ մասնակից:

«Բևեռային ուղի» ՍՊԸ-ն նշել է, որ Ընկերության կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով և Ընթացակարգի հարվերի 8.13 և 8.14 կետերի համաձայն հրավերի 8.13-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը ենթակետով և ծանուցման մեջ նշված ժամկետում ուղարկվել է Ընթացակարգի հրավերով նախատեսված «policevp-gnumner@rambler.ru» էլեկտրոնային փոստին, ինչը հիմնավորվում է Ընկերության «beverayin.ughi@yahoo.com» էլեկտրոնային փոստի ուղարկված նամակներ բաժնի և համապատսխան նամակի «printscreen» տպագրված փաստաթղթերից, որոնք ներկայացվել են բողոքին կից:

«Բևեռային ուղի» ՍՊԸ-ն հավաստում է նաև, որ էլեկտրոնային փոստով նամակի ուղարկելուց հետո մինչ այժմ նամակը չհասնելու վերաբերյալ «rambler.ru» համակարգից

էլեկտրոնային ծանուցում չի ստացվել: Ընկերությունը ստուգել է նաև նամակի ուղարկման էլեկտրոնային հասցեի ճշտությունը, որում որևիցէ սխալ առկա չէ:

«Բևեռային ուղի» ՍՊԸ-ն բողոքով առաջարկել է՝ Խորհրդին տրամադրել «beverayin.ughi@yahoo.com» էլեկտրոնային փոստի գաղտնաբառը, ինքնուրույն ուսումնասիրելու նամակագրությունը, կամ նամակի ուղարկման կամ չստացման վերաբերյալ հիմնավոր տեղեկություններ ստանալու համար հարցում ներկայացնել համապատասխան պետական մարմնին:

Որպես բողոքի իրավական հիմք՝ Ընկերությունը վկայակոչել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը և Ընթացակարգի հրավերի 8.13 և 8.14 կետերը, համաձայն որոնց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերի 8.13-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը հիշյալ ենթակետով սահմանված ժամկետում ուղարկում է հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին, ինչը և «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում իրականացրել է:

Կարգի և հրավերի համաձայն՝ մասնակիցը չունի էլեկտրոնային փոստով ուղարկված փաստաթղթերը պատվիրատուին ամբողջական, ժամանակին և ընդհանրապես հասնելու փաստը ստուգելու համար որևէ պարտավորություն:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ իր կողմից՝ որպես Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մանսակից լիարժեք կերպով իրականացվել է Կարգով և Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջները, հանդիսացել է բարեխիղճ և պարտաճանաչ մասնակից:

Ընկերությունը բողոքին կից ներկայացրել է «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի «beverayin.ughi@yahoo.com» էլեկտրոնային փոստի «ուղարկված նամակներ» բաժնի «printscreen» քաղվածքը և նույն էլեկտրոնային փոստից ուղարկված համապատասխան նամակի «printscreen» քաղվածքը:

Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է փոփոխել «ՀՀ ԿԱ ՈՉ ԳՀԾՁԲ-17/9/ԱԲ/1/ԿԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ պայմանագիր կնքելու մասին 07.07.2017թ. որոշումը և հաղթող ճանաչել «Բևեռային ուղի» ՍՊԸ-ին:

«Բևեռային ուղի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.07.2017թ. ժամը 14:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից 18.07.2017թ. Խորհրդին էլեկտրոնային եղանակով տրամադրվել են «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-17/9/ԱԲ/1/ԿԾ» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուի կողմից բողոքի վերաբերյալ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.07.2017թ. ժամը 14:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲԽ-ԱՄ-2017/19 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2017/19 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-17/9/ԱԲ/1/ԿԾ» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով 26.06.2017թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Բևեռային ուղի» ՍՊԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ոստիկանության զորքերի «policevp-gnumner@rambler.ru» պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկել «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԾՁԲ-17/9/ԱԲ/1/ԿԾ» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.06.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված, որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. ***«Բևեռային ուղի» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել է Ընկերության «beverayin.ughi@yahoo.com» էլեկտրոնային փոստից ՀՀ ոստիկանության զորքերի «policevp-gnumner@rambler.ru» պաշտոնական էլեկտրոնային փոստին 27.06.2017թ. որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող «beverayin.ughi@yahoo.com» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը:***

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի 11.07.2017թ. բողոքը, «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԾՁԲ-17/9/ԱԲ/1/ԿԾ» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

1) առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին մասի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը

և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.13-րդ ենթակետի 4-րդ պարբերության համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Նույն կետի 8.14-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը սույն հրավերի 8.13-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը հիշյալ ենթակետով սահմանված ժամկետում ուղարկում է հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ սույն հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ «policevp-gnumner@rambler.ru»:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԾՁԲ-17/9/ԱԲ/1/ԿԾ» ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 21.06.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը, առաջնորդվելով Կարգի 43-րդ կետի 3-րդ կետով, ***26.06.2017թ.*** ծանուցել է «Բևեռային ուղի» ՍՊԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ոստիկանության զորքերի «policevp-gnumner@rambler.ru» պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկել «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-17/9/ԱԲ/1/ԿԾ» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.06.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի հայտը՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից բողոքին կից ներկայացվել է «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի ***«beverayin.ughi@yahoo.com» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, որի համաձայն՝ Ընկերության կողմից 27.06.2017թ. ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի «policevp-gnumner@rambler.ru» էլեկտրոնային հասցեին ուղարվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:***

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ ծանուցումն ուղարկվելուց հետո ***(26.06.2017թ.)***, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված երեք աշխատանքային օրվա ընթացքում ***(27.06.2017թ.)*** «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-17/9/ԱԲ/1/ԿԾ» ծածկագրով ընթացակարգի հրավերով և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

քարտուղարի կողմից ուղարկված համապատասխան ծանուցման մեջ մատնանշված ***«policevp-gnumner@rambler.ru» էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, որը հաստատվում է Ընկերության «beverayin.ughi@yahoo.com» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքով,*** ուստի Խորհուրդը գտնում է, որ «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի կողմից 11.07.2017թ. ներկայացված բողոքն սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «Բևեռային ուղի» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին Ընկերության կողմից ներկայացված պահանջին, ապա Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը: Ընդ որում նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված: Ուստի Խորհուրդը գտնում է, որ Ընկերության բողոքը սույն պահանջի մասով ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Բևեռային ուղի» ՍՊԸ-ի կողմից 11.07.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝

1. Դադարեցնել «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-17/9/ԱԲ/1/ԿԾ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.06.2017թ. թիվ 4 արձանագրությամբ «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի հայտը՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու հիմքով մերժելու մասին որոշումը և որպես հետևանք

դադարեցնել նաև «ՀՀ ԿԱ ՈՀ ԳՀԾՁԲ-17/9/ԱԲ/1/ԿԾ» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին 07.07.2017թ. որոշումը:

2. «Բևեռային ուղի» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու պահանջի մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ